Հավելված 4
ՀՀ Տավուշի մարզպետի
" 15 " մարտի 2023 թ. թիվ 55 որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Մարզպետի որոշումներով, սույն կանոնադրությամբ, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

1) Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գործունեությունն ուղղված է վարչությանը վերապահված լիազորությունների իրագործման և պարտականությունների արդյունավետ կատարման ապահովմանը:
2) Վարչության հիմնական խնդիրն է արդյունավետ իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում պետական քաղաքականությունը:
3) Նպաստել հանրակրթական, մշակութային և սպորտային ծրագրերի իրագործմանը, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը:
4) Վերահսկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործընթացների նախապատրաստման և ժամկետների պահպանման աշխատանքները:

## III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ

1)Համակարգում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը, ապահովում պետական հանրակրթական ծրագրերի իրագործումը, իրականացնում ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն,

2)Աջակցում է մարզի ուսումնական հաստատությունների կառուցման, վերանորոգման և շահագործման աշխատանքներին,

3)Ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը,

4)Վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան,

5)Համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում,

6) Համակարգում է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մրցույթների անցկացման գործընթացը,

7) Համակարգում է դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման գործընթացը,

8)Համակարգում է ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման և փաստաթղթային ատեստավորման գործընթացը,

9) Ապահովում է դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման գործընթացը,

10) Ապահովում է «Հեռավոր բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցների ուսուցիչներով ապահովում» ծրագրի շրջանակներում մարզ գործուղված ուսուցիչների հաշվառման գործընթացը,

11)Կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը, վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը,

12)Իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ պատմության և մշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ,

13)Աջակցում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների կառուցմանը, հանգստի գոտիների ստեղծմանը, պահպանմանը և շահագործմանը,

14)Համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ,

15)Ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը մարզում,

16)Ապահովում է ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանումը, տարածումը և զարգացումը,

17)Համակարգում է մարզի տարածքում գործող մշակութային դպրոցների, թատրոնների, պետական ինքնագործ համույթների, գրադարանների, թանգարանների, ակումբների, խմբերի գործունեությունը,

18)Համակարգում է մարզի երիտասարդության հետ տարվող աշխատանքները,

19)Հսկողության է իրականացնում մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ, ապահովում հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպումը և անցկացումը,

20)Համակարգում է մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի կազմակերպությունների՝ մարզադպրոցների, մարզական ընկերությունների գործունեությունը,

21)Աջակցություն է ցուցաբերում մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների հավաքական թիմերին՝ հանրապետական առաջնություններին և միջազգային մրցաշարերին լավագույնս մասնակցության նպատակով,

22)Համակարգում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ և համաձայնեցված գործունեությունը,

23) Համակարգում է մարզի դպրոցականների շրջանում տարբեր մարզաձևերից տարածաշրջանային և մարզային մրցումների կազմակերպումը և անցկացումը, մասնակցում է մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի մշակմանը,

24)Մարզական կարգերի և կոչումների շնորհման համար կազմում և ներկայացնում է միջնորդագրերի նախագծեր,

25)Կազմակերպում և անց է կացնում ֆիզկուլտուրային-առողջարարական և տարբեր մարզաձևերի մարզային մարզական միջոցառումներ,

26)Վերահսկողություն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացի վրա,

27)Ցուցաբերում է մեթոդաբանական աջակցություն ուսումնական և մշակութային կրթական հաստատություններին,

28)Աջակցություն է ցուցաբերում համայնքապետարաններին և մարզական կազմակերպություններին՝ առաջնություններ և մրցաշարեր կազմակերպելու գործընթացում,

29)Ապահովում է հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպումը և անցկացումը.

30) Աջակցում է մարզաձևերի զարգացման և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացին

## IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7.Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետի կողմից հաստատված հաստիքացուցակով:

8.Վարչության գործունեությունը համակարգում է Մարզպետը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացնում մարզպետի Աշխատակազմի գլխավոր քարտուղարը

9.Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

10. Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11.Վարչության պետը պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

13.Վարչության կազմում է վարչության պետը, գլխավոր և ավագ մասնագետները:

14.Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքները և պարտականությունները, շփումները և հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրով /աշխատատեղի նկարագրով/:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ